Հակոբ Մնձուրի | Նուռ մամը

Գոլով թոնիրին վերի կուշտը լայն, լայն այտերով, մեծղի կազմով Նուռ մամը նստեր է։ Իր աջ ու ձախ կողմը, քյուրսիին շարվեր ու խելոքխելոք նստեր են տասնյակ մը փոքրիկներ, իր թոռներն ու դրացի տուներու երախաները։

Կըսես՝ թոնրատունը դպրոց մըն է, Նուռ մամը կարդացող, մանուկները՝ սանիկներ։ Ու հիմա Նուռ մամը պիտի սկսի, այբբեն պիտի ըսե,ու սանիկները՝ մատիկները քերականներուն վրա, մեկ ձայն, մեկ բերան պիտի կրկնեն, ինչ որ ան արտասանե։

Բայց չէ՛, Նուռ մամը կարդացող չէ։ Ան կարդալ չգիտեր, ան գիտե, շա՛տ, շա՛տ հեքիաթ։ Խոստացեր է հեքիաթ պատմելու, ու անոր համար՝ երախաները, բոլորվելով, նստեր են։ Ան հեքիաթասաց է։

Միջօրետք է։ Դուրսը ձյուն մը հանդարտ ու խաղաղ կտեղա։

Իր թոռնիկներեն աղջնակ մը՝ Նանոն, կխոսի. – Նուռ մամ, Նուռ մամ, ու՞ր է՝ հեքիաթ պիտի զրուցեիր մեզի, ըսե նայինք։

— Պիտի զրուցեմ,— կպատասխանե Նուռ մամը, — որ խելոք նստիք, որ խոսք տաք՝ աղմուկ չհանելու, պիտի ըսեմ։

Բոլոր մանկիկները միաբերան կկրկնեն. — Պիտի կենանք, խելոք պիտի ըլլանք, նուռ մամ, որ ձայն հանենք՝ մի ըսեր։

Սև թաղիքե գլխարկին վրա մեծածավալ լաչակով ու բերանակալով Նուռ մամը կհարե, գորովով։

— Բզեզին պատմությունը ըսեմ ձեզի, կուզե՞ք։ Ճան խաթուն, Մերճան խաթունը ուր է՝ բզեզը ինկեր է առուին մեջ, կխեղդվի, մկնիկ մը օգնության կհասնի. «Ձեռքդ տուր, որ քաշեմ,կըսե մկնիկը, «Դան գնա,հոտ կուգա քենե», կպատասխանե բզեզը։ Ձիավորներու խումբ մը կանցնի դաշտին մեջտեղեն. «Ձիավորնե՛ր… կտրի՛ճ ձիավորներ… հասի՛ք ազատեցեք իս. Ճան խաթուն, Մերճան խաթունը ջուրն է ինկեր

կխեղդվի»։ Ձիավորները ձիերը կկայնեցնեն ու մտիկ կընեն։ Ամայի դաշտին երեսը մարդ չկա, այս ձայնը ուրկե՞ կուգա, ու խելքի չեն կրնար հասցներ։ Անիկա պատմե՞մ ձեզի։ Միտքդ կուգա՞, Նանո, դուն որ պզտիկ էիր, շատ պզտիկ,գիրկս կուգայիր կնստեիր, երբ որ քեզի կպատմեի՝ շատ կուրախանայիր։

— Չէ, չէ… ես ան չեմ ուզեր հիմա,— կպատասխանե Նանոն,– ուրիշ մը պատմե։

— Թերզուն աղջիկը պատմե՞մ, որ կուզեք՝ ան պատմեմ,— կշարունակե Նուռ Մամը։— Իշխանին տղան ամեն իրիկուն պարտեզը պտտիլ կելլե, թերզուն աղջիկը կտեսնե, կզարնվի անոր. «Թերզու աղջիկ, ռեհանին տերևը քանի՞ է»։ «Պեկորդի, պեկ ես՝ երկնքին աստղերը քանի՞ են»։ Ու աղջիկը կմերժե պեկորդին առնելու։ «Իշխանաձուկե՛ր, համե՛ղ համե՛ղ, համե՛ղ իշխանաձուկեր…»։ Պեկորդին ձկնորսի լաթեր է հագեր, ձուկ կծախե, կողովը կցուցադրե թերզիին տանը առաջքը։ Մայր ու աղջիկ դուրս կուգան, կսքանչանան։ — «Մեկ համբույր մը… ես դրամ չեմ ուզեր»։ Մայրը կհամոզե աղջիկը։ Ի՞նչ կլլա, մարդ չտեսներ, համբույր մը տուր։ Իրիկուն է, պեկորդին նորեն պարտեզը կուգա. «Թերզու աղջիկ, թերզու աղջիկ, ռեհանին տերևը քանի՞ է»։— «Պեկորդի, պեկ ես երկնքին աստղերը քանի՞ են»։ «Դա՛ն գնա, ձուկ ծախողեն համբուրվողը»։ Վա՛յ, պեկորդին պարտեց զինքը ըսել է, կեցիր դուն… պատմե՞մ ասիկա։

— Քառսուն աղջիկներուն հեքիաթը պատմե, Նուռ մամ,— կընդմիջե դրացի տունեն ծաղկավեր, կոտուն Խորոն, որ մինչև վիզը թաղվեր է քյուրսիին մեջ։

— Հա, հա, Նուռ մամ, պատմե,— կձայնակցին երախաները։ — Կպատմեմ, կպատմեմ։

— Լճակը՛… — կձայնե հանկարծ իր մանչ թոռնիկը՝ Արոն,— լճակը։

Քույր մը, աղբար մը կլլան։ Աղբարը օր մը դուրս ելեր է, քույրը ջուր տաքցուցեր, տաշտը դրեր, հաներ է լաթերը ու պիտի լոգնա… — Հապա Սըհակը՞,– մատիկները իրար զարնելով կհարե ժպտուն, թրթռուն Շողերը։ Սըհակը աղվոր չէ՞։ Խաթումամ, ան ամեն աղվորն է։ Գիտե՞ս, ան թռչուն չէ եղեր։ Լալեն, լալեն թռչունի է փոխվեր, ու հիմա ամեն գիշեր կալերուն պատերուն մոտ, հովիտներու բարտիներուն վրա կուգա ու մութին մեջ ողորմուկողորմուկ կկանչե, «Սըհա՛կ.. Սըհակ… Սըհա՛կ…» Հարսիկս ըսավ ինծի։ Երեկ չէ, առջի օր՝ հարսիկս գլուխս սանտրած ատենը պատմեց ինծի։

— Կկուն ալ թռչուն չէ եղեր,— կնկատե ցուրտեն, ձյուներուն հետ խաղալեն կարմրած, ճաթռտած ձեռքերով Սերոն։ — Գոգոր անունով աղբար մը ունի, ան ժուռ կուգա մարդ չեղած ձորերը. «Գո՜գոր… Գոգո… Գո՜գո…» կանչելով։ Մտիկ որ ընես ձայնը, գիտես թե՝ իրավցնե մարդ է,մարդու ձայն է, տղա մըն է, որ պահվըտեր է քարի մը ետին ու կկանչե այդպես։

— Ես մեկն ալ չեմ սիրեր։ Փշիկը կսիրեմ,— կհայտնե դեղնամազ Նարոն,–Գիտե՞ս. արտերու, լեռներու տղեկ մը կլլա ատենոք, կարմրուկ շաքարի պես բերանիկով, ոսկի մազերով։ Բլուրներուն վրա կվազե ու կխաղա։ Ու օրին մեկը փուշ մը կմտնե տոտիկը։ Ցավին չդիմանար։ Գեղ մը՝ կելլե կերթա, բակի մը դուռը բաց է, ներս կնայի, որ ալյուրոտ երեսներով պառավ մը նստեր է բոցերով թոնիրի մը դումին մոտ, րապաթը ձեռքը հաց կեփե. — «Մամա, մամա, ի՞նչ կլլա, տոտիկս փշիկ մըն է մտեր, կցավի, ըրի, ըրի՝ ես չկրցա հանել, դուն հանե։ Որ հանես՝ քեզի թոռնիկ կըլլամ»։ Մաման կհանե, տղեկը, կփախի ու կերթա, նորեն կխաղա, մեկ մըն ալ միտքը կիյնա թե փշիկը ինչո՞ւ տվեր էր պառավին։ Կդառնա,կուգա. — «Մամա, փշիկս տո՛ւր, ես փշիկս կուզեմ, ո՞ւր է փշիկս», ու տոտիկները կզարնե գետնին։ Պառավը կըսե, թե փշիկը թոնիրին բոցերուն մեջ է նետեր, ալ ինչպե՞ս կգտնվի, իրեն թոռնիկ է եղեր, ալ ինչո՞ւ սիրտը կհատցնե, բայց տղեկը կպնդե նորեն։ Ետքեն պառավը շատ մը թոնրահացեր կուտա։ Կկախե ուսիկեն վար, կերթա, կերթա, որ՝ առվի մը մոտ հովիվներ նստեր են, անոնք հոտը պառկեցուցեր են, իրենք ալ կաթ կուտեն։ «Ո՞ւր է, կըսե, կաթ ունիք, գդալ ունիք ու հաց չունիք, կուզե՞ք այս հացիկներս ձեզի տա՞մ»։ Հովիվները կուրախնան, տղեկը կնստեցնեն իրենց մոտ , հացերը կաթին մեջ կփշրեն, տղեկն ալ միասին՝ կսկսեն ուտել։ Այս հեքիաթը գիտե՞ս, Նուռ մամ, երբ որ կպատմեն՝ ինձի կուգա, թե մեր Խաչի Դարի առուն է, հովիվներն ալ նստեր են մեր ուռենիներուն տակ։

Բայց հարաշարժ, լեզվանի Նանոն «Ծղրիթ մորքուրը» կուզե։ Պետք է, որ Նուռ մամը ան պատմե, իր ուզածը։

— Ծղրիթ մորքուրին հեքիաթը, Նուռ մամ, ան պիտի պատմես, հա՞։ Մայր մը դռանը շեմին կնստի ու իր աղջիկը կգովե։ «Աղվո՜ր ինչպե՜ս աղվոր, լուսունկին տասնըհինգեն ալ աղվոր երեսներով։ Պոյով ու պուսով, պոյը ջրարբի արտի ցորենի ճե՜ղ է։ Մազ չէ, սըռմայի թել է մազերը։ Որ ծամերը քակելու ըլլա՝ ոսկի քողք է, որ կիջնա վերեն վար։

Որ կուժ մը շալկե ու աղբյուրը երթա, նայող հեյրա՛ն կըլլա։ Որ նստի ու գորգ գործե, բուրդի թել չէ, որ կբանի, տասը մատներեն տասը տեսակ նախշ է, որ կթափե։ Որ բուրդ մանելու ըլլա՝ լիրը կմանե, լիրը կգզե, ու հարսնիքին օրը ցերեկվան պարին ալ կհասնի։ Ի՞նչ ընեմ, մեր աղջիկը չըլլար, ու էլին տուն հարս երթար։ Էլին աղջիկը ըլլար ու մեր տուն հարս գար»։ Ու օրին մեկն ալ հեռու երկիրե մը երիտասարդ ձիավոր մը կուգա։ Այս հեքիաթը պիտի ըսես, Նուռ մամ։

Ու իրարանցում մըն է՝ կհաջորդե թոնրատան մեջ։ Բոլոր մանուկները կաղմկեն, կուզեն, որ իրենց ուզածը պատմե։

Նուռ մամը կսաստե բոլորը։

Հասկցավ։ Խելոք չեն նստիր։ Այդ բոլորն ալ պիտի պատմե, ու նաև ուրիշ շատ հեքիաթներ, բայց կարգով, ու ինք պիտի որոշե։ Հիմա առաջին անգամ «Եղնիկ աղբարեն» պիտի սկսի։

— Ուր է՝ քույր մը, աղբար մը կըլլան. գիտե՞ք ասիկա, ծարավ են ու կանցնին անապատե մը։ Կհասնին տեղ մը, ուր անձրև է եկեր, ոչխարներու հոտ մըն է անցեր, կճղակներուն կոխած տեղերը ջուր է հավաքվեր։ Աղբարր կհարցնե. «Քուրուկ, խմե՞մ սա փոսիկին ջրեն»։

— Չէ , չէ , չէ՛, չէ՛… որ խմես՝ խոյիկ մը կըլլաս, որ խոյիկ ըլլաս անտեր քուրուկդ ո՞վ պիտի պահե։

Ավելի անդին կերթան՝ եզներ են անցեր։

— Քուրուկ, խմեմ, հա՞, աս փոսիկներուն ջրեն։

— Չէ, չէ… որ խմես՝ մոզիկ մը կըլլաս, որ մոզիկ մը ըլլաս՝ անտեր քուրուկդ ո՞վ պիտի պահե։

Նորեն կերթան, կերթան որ՝ եղնիկներ են անցեր։

— Քուրուկ, աս փոսիկներեն խմեմ, հա՞, ի՞նչ կըլլա։

— Վա՛յ ինծի, որ խմես՝ եղնիկ մը կըլլաս, որ եղնիկ մը ըլլաս՝ անտեր քարուկդ ո՞վ պիտի պահե։

Ու, ետքնուետքը, քուրուկն է՝ չդիմանար, թույլ կուտա։

— Պուտ մը, պտիկ մը պիտի խմես։

Ու տղեկն է՝ կխմե, ու մեկեն եղնիկ մը կըլլա, հինայի գույնով, պոչիկով, եղջյուրիկներով, պզտիկ, պզտիկ եղնիկ մը, ձագուկ մը։ Ասիկա պիտի պատմեմ ասօր։ Անկե ետքն ալ ամեն օր՝ մեկմեկ հատ։

— Հա՛, հա՛, Նուռ մամ, Եղնիկ աղբարը պատմե, ատ՝ ամենեն աղվորն է,— կկրկնեն բոլորը միաբերան,— մենք լավ չենք գիտեր հեքիաթը։

Ու երախաները կհամաձայնին, կհանդարտին, կսեղմվին իրարու ու ակնապիշ մտիկ կընեն։

Նուռ մամը կսկսի հեքիաթը։ Կհրճվին մանուկները։ Ամենուն աչքերուն մեջ ու դեմքերուն վրա հիացում կա։

Տաք, գոլով է թոնիրը։